ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« —— » _____ 2010թ. Հ. _____

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 19-ի թիվ 300 որոշմամբ, հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին սեփականության իրավունքով պատկանող Աշտարակի խճուղի, Հույսի ավան թաղամասում գտնվող գույքի համար տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 4,185,305 (չորս միլիոն մեկ հարյուր ութսունհինգ հազար երեք հարյուր հինգ) դրամի չափով, որից ապառք՝ 3,506,600 (երեք միլիոն հինգ հարյուր վեց հազար վեց հարյուր) դրամ, տույժ՝ 678,705 (վեց հարյուր յոթանասունութ հազար յոթ հարյուր հինգ) դրամ :

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամը Դավթաշեն վարչական շրջանի «Հույսի ավան» հասցեում տեղակայված սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի /գույքահարկով հարկվող օբյեկտի/ համար 01.02.2010թ. դրությամբ ունի 4,185,305 դրամի չափով գույքահարկի պարտք (որից 3,506,600 դրամ ապառք, 678,705 դրամ տույժ) որի համար 30.09.2009թ. հ. 9/20023 և 24.12.2009թ. հ. 9/27000 գրությամբ դիմել է քաղաքապետին գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի «Հույսի ավան» ծրագիրը ՀՀ Կառավարության 10.10.2001թ. N Մ-328 որոշմամբ ճանաչվել է բարեգործական: Համաձայն այդ ծրագրի՝ նախատեսված էր հիմնադրամի կողմից կառուցել բնակելի թաղամաս Երևան-Աշտարակ խճուղուն հարակից տարածքում՝ Երևան քաղաքի սոցիալապես անապահով շուրջ 200 ընտանիքների անհատույց բնակարաններ հատկացնելու նպատակով: 2002 թվականին հիմնադրամի կողմից սկսվել են շինարարական աշխատանքները: Արդյունքում 2003 թվականին Երևան քաղաքի սոցիալապես անապահով ընտանիքներին հանձնվել են 21, 2004 թվականին՝ 10, 2006 թվականին՝ 27, 2008 թվականին՝ 17 բնակարաններ և առանձնատներ:

Հատկանշական է այն փաստը, որ հիմնադրամի կողմից հաշվարկված գույքահարկի գծով հարկային պարտավորությունները մարելու դեպքում նկատելի ձևով կնվազի անապահով ընտանիքներին ցուցաբերվող օժանդակությունը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից մշտապես իրականացվող բարեգործական գործունեությունը, ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության մարզերում, առաջարկվում է «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի նկատմամբ սահմանել 4,185,305 (չորս միլիոն հարյուր ութսունհինգ հազար երեք հարյուր հինգ) դրամի չափով գույքահարկի գծով արտոնություն:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամը Դավթաշեն վարչական շրջանի «Հույսի ավան» հասցեում տեղակայված սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի /գույքահարկով հարկվող օբյեկտի/ համար 01.02.2010թ. դրությամբ ունի 4,185,305 դրամի չափով հարկային պարտավորություն (որից 3,506,600 դրամ ապառք, 678,705 դրամ տույժ), որի համար 30.09.2009թ. հ. 9/20023 և 24.12.2009թ. հ. 9/27000 գրությամբ դիմել է քաղաքապետին գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի դիմումները ուղղված Երևանի քաղաքապետին գույքահարկի գծով արտոնություն ստանալու վերաբերյալ (30.09.2009թ. հ. 9/20023 և 24.12.2009թ. հ. 9/27000) և հիմնադրամի կողմից ցուցաբերվող օժանդակությունը սոցիալապես անապահով ընտանիքներին, նպատակահարմար եմ գտնում «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին տրամադրել 4,185,305 (չորս միլիոն մեկ հարյուր ութսունհինգ հազար երեք հարյուր հինգ) դրամի չափով գույքահարկի գծով արտոնություն:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ